

նարկութիւն ըրած է Մ. Խոստիկեան, Արա-
րատ, 1902, էջ 1017. Կը հրատարակուի ա-
ւաջին անգամ այստեղ: Ձեռագրին մէջ ան-
խորագիր է գրուածքս:

ԹՈՒՂԹ ԳՐԻԳՈՐ ԿԵՍԱՐԱՅԼՈՅ ԱՈ ԷՅՄԻԻԱԾՆԵՅԻՍ:

(Ձեռ. էջմ. 1771, քղ. 295—298 ք:)

Իմացիք որ ճշմարիտ հովիւքն որքան էին
յաշխարհի, զանիմաստն եւ զտգէտսն ուսու-
ցանէին. ընդ անկարգիցն կազէին. ընդ քանա-
սարիցն⁴ եւ ընդ զողոցն մրցեալ հալածէին.
Եւ այնու ոչ շատնացեալ, այլ ճշմարտութիւն
գրովք արձանացուցեալ. զի զկնի իւրեանց մի
խանգարեալ բան ճշմարտութեան սուղեսցի.
Եւ ստութիւն զօրացի: Այլ ես մեղօք զառա-
ծեալս Գրիգոր յորջորջեալս թէպէտ տակաւին
կենդանի եմ, այլ ծերացեալ եմ, ի յանկեն-
դան արանց գոլով. այլ սակաւ⁵ ինչ ծանուցա-
նեմ սուրբ էջմիածնին բնակչացդ, զի թէպէտ
Տէրն յես երկու եւ երից անգամ խրատելոյն
անլուր եղելոցն բարուք զտարանջատելն
վարկանէր արժան ի յօձարարոյիցն, այլ պար-
զամտաց եւ աղանազունիցն եւ անմեղացն
անդոյլ ուսուցանել ըստ Առաքելոյն. թէ Ան-
չափ երկնեցից մինչեւ նկարեսցի ի ձեզ Քրիս-
տոս⁶:

Այլ թէպէտ բազում անգամ խրատեցաք

⁴ Ձ. կարգէին ընդ քանատարիցն:

⁵ Ձ. սակայն:

⁶ Գաղատ. Դ. 19: